Վարչական գործ թիվ ՎԴ/2209/05/11

Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
10 ապրիլի 2012թ. ք.Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը՝
նախագահությամբ՝ դատավոր Ռուզաննա Հակոբյանի

մասնակցությամբ՝
հայցվորներ՝ «Թռչնասերների կենտրոն» բնապահպանական ՀԿ
«Էկոդար» բնապահպանական ՀԿ
/ներկայացուցիչ՝ Լևոն Օհանյանի/
պատասխանող՝ ՀՀ բնապահպանության նախարարություն
/ներկայացուցիչ՝ Լևոն Գևորգյանի/
երրորդ անձ՝ «Դելֆինարի Նեմո» ՍՊԸ /ներկայացուցիչ՝ Լիլիթ Սահակյանի/

2012թ. մարտի 24-ին դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի «Թռչնասերների կենտրոն» բնապահպանական ՀԿ-ի և «Էկոդար» բնապահպանական ՀԿ-ի ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության, երրորդ անձ՝ «Դելֆինարի Նեմո» ՍՊԸ՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի ,,ժ,, և ,,ժգ,, ենթակետերով սահմանված փորձաքննություն կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ վարչական դատարանի 31.05.2011թ. որոշմամբ վարույթ է ընդունվել Թռչնասերների կենտրոն» և «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպությունների հայցն ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի ,,ժ,, և ,,ժգ,, ենթակետերով սահմանված փորձաքննություն կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին:
Նույն օրվա որոշմամբ գործով երրորդ անձ է ներգրավվել «Դելֆինարի Նեմո» ՍՊ ընկերությունը:
Պատասխանող ՀՀ բնապահպանության նախարարությունը 20.06.2011թ. ՀՀ վարչական դատարան է ներկայացրել հայցադիմումի պատասխան:
Հրավիրվել են նախնական դատական նիստեր, որտեղ պարզաբանվել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հարցերը, սահմանվել է ապացուցում պահանջվող փաստերի շրջանակը և կողմերի միջև բաշխվել է ապացուցման բեռը:
Դատարանի 28.11.2011թ. որոշմամբ սույն գործը նշանակվել է դատաքննության: Գործի դատաքննությունն ավարտվել է 24.03.2012թ. և դատական ակտի հրապարակման օր հայտարարվել 10.04.2012թ:

Հայցվորների ներկայացրած փաստերը, հիմնավորումները.

24.12.2010թվականին Երևանում՝ Կոմիտասի անվան այգում« «Դելֆինարի Նեմո» ՍՊԸ-ն Ուկրաինայից ՀՀ ներմուծելով 4 առանձնյակ խաղաղօվկանոսյան աֆալինա դելֆիններ և 2 առանձնյակ հարավամերիկյան փոկեր« բացեց դելֆինարիում:
Դեռևս 30.09.2010թվականին՝ ՀՀ բնապահպանության նախարարին ուղղված իրենց հարցման պատասխանի համաձայն «Դելֆինարիայի տնօրինությունը չի դիմել և կառուցապատման փաստաթղթեր չի ներկայացրել ՀՀ բնապահպանության նախարարության՝ շրջակա միաջավայրի վրա ազդեցության փորձաքննության եզրակացություն ստանալու համար»:
22.10.2010թվականի՝ ՀՀ բնապահպանության նախարարին ուղղված ՀՀ Ազգային Ժողովի «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ս.Սաֆարյանի հարցմանն ի պատասխան հայտնվել է« որ «Համաձայն ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի «ժ» ենթակետի՝ նախատեսվող դելֆինարիումի կառուցման գործունեությունն ենթակա է բնապահպանական փորձաքննության: Ելնելով նշվածից՝ ՀՀ բնապահպանության նախարարությունը խնդրո առնչությամբ իր դիրքորոշումը

կիայտնի նախատեսվող գործնեությունն« օրենքով սահմանված կարգով« բնապահպանական փորձաքննություն անցնելուց հետո»:
24.12.2010թվականին նոր դիմում են ուղղել ՀՀ բնապահպանության նախարարին« որում նշվել է« որ մինչ 24.12.2010թվականը որևէ լրացուցիչ տեղեկություն ՀՀ բնապահպանության նախարարությունից չի ստացվել կապված կենդանիների ներմուծման թույլտվության քննարկման« ինչպես նաև բնապահպանական փորձաքննության հետ: Միաժամանակ հարկ են համարել նշել« որ «Շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությանը ենթակա նախատեսվող գործունեության իրականացում« առանց դրական փորձաքննական եզրակացության»:
Վերոնշյալ նամակին ՀՀ բնապահպանության նախարարությունը 25.01.2011 թվականին պատասխանել է« որ «Երևանի Կոմիտասի անվան այգու դելֆինարիումի կառուցման նախագծային փաստաթղթերն առայսօր չեն ներկայացվել բնապահպանական փորձաքննության: Գործող կառույցի
չափերը ըստ իրենց չափագրումների կազմում են 1256քառ.մ»:
Պատասխանողի պատասխաններից պարզ չէ« թե ինչու չի կատարվել և չի նշանակվել փորձաքննություն« որը պարտադիր պետք է կատարվեր «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջի համաձայն՝ ինչու չի արգելվել շինարարության իրականացումն ու կենդանիների նոր տեսակների ներմուծումը Հայաստանի Հանրապետություն« և ի վերջո« ինչու չի արգելվել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությանը ենթակա նախատեսվող գործունեության իրականացումը:
17.03.2011թվականին դիմում են ուղղել ՀՀ բնապահպանության նախարարությանը «Դելֆինարի Նեմո» ընկերության քաղաքաշինության և բնության պահպանության ոլորտներում իրականացվող գործունեության նկատմամբ կատարել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի «ժ» և «ժգ» ենթակետերով սահմանված փորձաքննություն: Այս նամակին մինչ 26.05.2011թվականը պատասխան չէր ստացվել:
23.05.2011թվականին ՀՀ բնապահպանության նախարարությունն իրենց 17.03.2011թ. դիմումին ի պատասխան նշել է. «Ձեր դիմումը չի կարող բավարարվել հետևյալ պատճառաբանությամբ. ժամանակին ընկերության նախատեսվող գործունեության նկատմամբ փորձաքննություն չի իրականացվել օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի ,,ժ,, կետի մասով դելֆինարիայի շինարարության չափը չի գերազանցել սահմանայինը: Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի ,,ժգ,, կետի 2-րդ պարբերության մասով փորձաքննության ենթակա են կենդանիների նոր տեսակների ներմուծման գործունեությունը, եթե ներմուծված կենդանիները բաց են թողնվելու շրջակա միջավայր՝ իրենց տարածման բնական արեալից դեպի այլ բնական համալիրներ առանց կլիմայավարժեցման կամ կլիմայավարժեցման միջոցով»:
Այսպիսով՝ ՀՀ բնապահպանության նախարարությունը, չիրականացնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն« կոպտորեն խախտել է ոչ միայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջները, այլ նաև «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի (Օրհուս 28.06.1998թ., այսուհետև՝ Օրհուս) պահանջները« որը ՀՀ կողմից վավերացվել է 2001թվականին:
Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 10-րդ, 31-րդ հոդվածները, հայցվորը հայտնել է, որ ՀՀ բնապահպանության նախարարությունն այն լազոր մարմինն է, որը Հայաստանի Հանրապետության անունից վերահսկում է ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի պատշաճ կատարումը: Եվ եթե դա չի կատարվում« ապա խախտվում է ՀՀ Սահմանադրության 33.2-րդ հոդվածի դրույթները« համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում« պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը:
Վկայակոչելով Օրհուսի կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետը, 4-րդ հոդվածի 1-ին կետի «ժ», «ժգ» ենթակետերը, 12-րդ հոդվածը,ՀՀ կառավարության 1999 մարտի 30-ի թիվ 193 որոշման հավելվածի 7-րդ կետը և դրա փոփոխման վերաբերյալ ՀՀ վարչապետի 23.12.2010թվականի որոշումը, «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «խախտվել» բառից հետո «նրա» արտահայտության՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի 07.09.2010թ. որոշումը՝ հայցվորների

ներկայացուցիչը խնդրել է պարտավորեցնել ՀՀ բնապահպանության նախարայաությանը կատարելու «Միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի «ժ» և «ժգ» ենթակետերով սահմանված փորձաքննություն:
Դատաքննության ընթացքում վերը շարադրվածն ամբողջությամբ պնդելով հայցվորների ներկայացուցիչը խնդրեց հայցը բավարարել:

Պատասխանողի ներկայացրած փաստերը, հիմնավորումները.

Հայցը հիմնավոր չէ և ամբողջությամբ պետք է մերժվի հետևյալ հիմքերով:
Համահայցվորների ներկայացրած փաստերն էական նշանակություն չունեն գործի լուծման համար: Չկա ոչ մի փաստ այն մասին« որ պատասխանողի վարչական ակտերով« գործողություններով կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել համահայցվորների իրավունքները: Այսինքն՝ խախտվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջը:
Հղում կատարելով ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասին՝ պատասխանողի ներկայացուցիչը վկայակոչել է ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թվականի ապրիլի 1-ի որոշումը (վարչական գործ 3275/05/09), որում ամրագրվել է« որ ՀՀ օրենսդրությամբ դատարան դիմելու իրավունք նախատեսված է միայն այն անձանց համար« ում իրավունքներն անմիջականորեն խախտվել են վիճարկվող ակտով« գործողությամբ կամ անգործությամբ:
Քանի որ ՀՀ վճռաբեկ դատարանում քննարկված գործում և սույն գործում առկա են նույնանման փաստական հանգանանքներ« պատասխանողի ներկայացուցիչը խնդրել է այն համարել նախադեպային:
Ընկերության կողմից իրականցվող գործունեության նկատմամբ չի կարող փորձաքննություն իրականացվել« քանի որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք) կարգավորում է շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեությունը փորձաքննության ենթարկելու հարցերը: Այսինքն՝ փորձաքննության չեն կարող ենթարկվել իրականացվող գործունեությունները:
Ժամանակին ընկերության նախատեսվող գործունեության նկատմամբ փորձաքննություն չի իրականացվել հետևյալ հիմքերով.
ա) օրենքի 4-րդ հոդվածի 1 -ին մասի «ժ» կետի մասով փորձաքննություն չի իրականացվել« քանի որ.
- դելֆինարիայի շինարարության չափը չի գերազանցել սահմանայինը«
- լիազորված մարմինն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սահմանային չափը չգերազանցող նախատեսվող գործունեությունը փորձաքննություն անցկացնելու որոշում չի կայացրել« հաշվի առնելով այն« որ շինարարությունը պետք է իրականցվեր առանց շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող շինանյութերի (ցեմենտ« ավազ և այլն) օգտագործմամբ« մասնավորապես թեթև մետաղական կոնստրուկցիաներով հավաքման միջոցով և ըստ էության շինարարության ընթացքում չէր կարող շրջակա միջավայրի վրա էական բացասական ազդեցություն ունենալ:
բ) օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «ժգ» կետի 2-րդ պարբերության մասով փորձաքննություն չի իրականացվել« քանի որ նշված նորմի համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա են կենդանիների նոր տեսակների ներմուծման գործունեությունը« եթե ներմուծված կենդանիները բաց են թողնվելու շրջակա միջավայր՝ իրենց տարածման բնական արեալից դեպի այլ բնական համալիրներ առանց կլիմայավարժեցման կամ կլիմայավարժեցման միջոցներով: Այս դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության են ենթարկվում ներմուծվելիք կենդանիների նոր տեսակների ինտրոդուկցիայի արդյունքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի մասնավորապես տեղի բնական համալիրների« ղրանց կենսաբազմազանության և բաղադրիչների վրա:
Ինչ վերաբերում է «Դելֆիեարի Նեմո» ընկերության կողմից ՀՀ տարածք ներմուծված խաղաղօվկյանոսյան դելֆիններին« ապա դրանք պահվում են անազատ պայմաններում« այսինքն՝ դեպի բնական համալիրներ տեղաշարժման հնարավորությունների բացակայության համակարգով կառուցված արհեստական ջրավազանում:
Վերոգրյալ հիմնավորումներով պատասխանողի ներկայացուցիչը խնդրել է հայցը մերժել:

Երրորդ անձ «Դելֆինարի Նեմո» ՍՊ ընկերության ներկայացուցչի ներկայացրած փաստերը, հիմնավորումները.

Կառուցապատման մակերեսը չի գերազանցում 1000քմ-ը: Մասնագետների կողմից կատարվել են չափագրումներ և տրվել եզրակացություն: Իր կարծիքով մասնագետի եզրակացությունը բավարար է և փորձաքննություն անցկացնելու անհրաժեշտություն չկա: Երրորդ անձի

ներկայացուցիչը խնդրեց հայցը մերժել ամբողջությամբ:

Դատաքննությամբ հաստատված հանգամանքները.

գ հայցվորների ներկայացուցչին հասցեագրած 25.01.2011թ. թիվ 5/22.4/50140 գրությամբ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարը հայտնել է հետևյալը.
««Դելֆինարի Նեմո» ՍՊԸ-ն Ուկրաինայից ՀՀ տարածք է ներմուծել 4առանձնյակ խաղաղօվկիանոսյան աֆալինա դելֆիններ (Tursiops truncatus) և 2 առանձնյակ հարավամերիկյան փոկեր (Arctocephalis australis), որոնք «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական և բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի (CITES) 2-րդ հավելվածում ընդգրկված տեսակներ են:
Վերոնշյալ կենդանիները ՀՀ տարածք ներմուծելու համար Հայաստանի CITES-ի կառավարման մարմնի՝ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ներմուծման թույլտվություն (հավաստագիր) չի տրամադրվել՝ ինչի համար հիմք է հանդիսացել Կոնվենցիայի (CITES) 4-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը:Վերջինիս համաձայն CITES-ի 2-րդ հավելվածում ընդգրկված տեսակները Ուկրաինայից ՀՀ տարածք ներմուծման համար պահանջվում է միայն Ուկրաինայի CITES-ի կառավարման մարմնի՝ Ուկրաինայի բնապահպանության նախարարության կողմից նախապես տրամադրված արտահանման թույլտվությունը կամ վերարտահանման հավաստագիրը:
Երևանի Կոմիտասի անվան այգու Դելֆինարիումի կառուցման նախագծային փաստաթղթերն առայսօր չեն ներկայացվել բնապահպանական փորձաքննության: Ուսումնասիրությունների ընթացքում պարզվել է, որ շինարարության նախագծային փաստաթղթերը գտնվում են Երևանի քաղաքապետարանում: Գործող կառույցի չափերը ըստ մեր չափագրումների կազմում է 1256քառ.մ: Շինարարությունն իրականացվել է թեթև մետաղական կոնստրուկցիաներով: Կառույցի ներսում առկա է 18մ տրամագծով և 5մ խորությամբ մեկ լողավազան, ինչպես նաև ծովային փոկերի համար երկու փոքր չափերի (1,5մx1,5մ) լողավազաններ: Կառույցի ջեռուցման, ինչպես նաև կենդանիների համար նախատեսված ջրի տաքացման նպատակով կառուցված է և գործում է կաթսայատունը»:
գ ի պատասխան հայցվորների ներկայացուցչի 17.03.2011թ. դիմումի« կապված «Դելֆինարի Նեմո» ընկերության՝ քաղաքաշինության և բնության պահպանության ոլորտներում իրականացվող գործունեության նկատմամբ փորձաքննություն կատարելուն՝ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարը հայտնել է հետևյալը.
«Ձեր դիմումը չի կարող բավարարվել« հետևյալ պատճառաբանությամբ.
Ընկերության կողմից իրականացվող գործունեության նկատմամբ չի կարող փորձաքննություն իրականացվել« քանի որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք) կարգավորում է շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեությունը փորձաքննության ենթարկելու հարցերը: Ժամանակին ընկերության նախատեսվող գործունեության նկատմամբ փորձաքննություն չի իրականացվել հետևյալ հիմքերով.
ա) օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «ժ» կետի մասով փորձաքննություն չի իրականացվել« քանի որ.
- դելֆինարիայի շինարարության չափը չի գերազանցել սահմանայինը«
- լիազորված մարմինն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանային չափը չգերազանցող նախատեսվող գործունեությունը փորձաքննություն անցկացնելու որոշում չի կայացրել« հաշվի առնելով այն« որ շինարարությունը պետք է իրականացվեր առանց շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող շինանյութերի (ցեմենտ« ավազ և այլն) օգտագործմամբ« մասնավորապես թեթև մետաղական կոնստրուկցիաներով հավաքման միջոցով և ըստ էության շինարարության ընթացքում չէր կարող շրջակա միջավայրի վրա էական բացասական ազդեցություն ունենալ:
բ) օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «ժգ» կետի 2-րդ պարբերության մասով փորձաքննություն չի իրականացվել« քանի որ նշված նորմի համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա են կենդանիների նոր տեսակների ներմուծման գործունեությունը« եթե ներմուծված կենդանիները բաց են թողնվելու շրջակա միջավայր՝ իրենց տարածման բնական արեալից դեպի այլ բնական համալիրներ առանց կլիմայավարժեցման կամ կլիմայավարժեցման միջոցներով (ՌՎՑՐՏՊցՍՓՌև/introduction):
Այս դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության են ենթարկվում ներմուծվելիք կենդանիների նոր տեսակների ինտրոդուկցիայի արդյունքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի մասնավորապես տեղի բնական համալիրների« դրանց կենսաբազմազանության և բաղադրիչների վրա:
Ինչ վերաբերվում է «Դելֆինարի Նեմո» ընկերության կողմից ՀՀ տարածք ներմուծված

խաղաղօվկյանոսյան դելֆիններին« հայտնում ենք« որ դրանք պահվում են անազատ պայմաններում« այսինքն՝ դեպի բնական համալիրներ տեղաշարժման հնարավորությունների բացակայության համակարգով կառուցված արհեստական ջրավազանում:
Միաժամանակ տեղեկացնում եմ« որ ս/թ մարտի 22-ից մինչև մարտի 30-ը ստուգվել է «Դելֆինարի Նեմո» ՍՊ ընկերությունը:
Ստուգման ընթացքում պարզվել է« որ կառույցի ներսում առկա է մեկ լողավազան՝ 18 մ տրամագծով և 5 մ խորությամբ« ինչպես նաև երկու փոքր չափերի (1.5մ X 1.5մ) լողավազաններ՝ ծովային փոկերի համար:
Ստուգման ընթացքում «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության կենտրոնական լաբորատորիայի կողմից կատարվել են ջրի որակի ֆիզիկաքիմիական անալիզներ և պարզվել է« որ ստացված արդյունքները համապատասխանում են թույլատրելի նորմերի պահանջներին»:

Առաջնորդվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածում ամրագրված՝ գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքով, լսելով դատավարության մասնակիցների բացատրությունները, հետազոտելով գործում եղած գրավոր ապացույցները, և դրանցից յուրաքանչյուրը գնահատելով բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, դատարանը եզրակացրեց, որ հայցը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ:

Սույն վեճի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, ՀՀ վարչական դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:
2011 թվականի ապրիլի 01-ին քննելով «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպության /այսուհետ՝ Կազմակերպություն/ վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 24.03.2010 թվականի թիվ ՎԴ/3275/05/09 գործով վճռի դեմ՝ ըստ Կազմակերպության հայցի ընդդեմ ՀՀ կառավարության« ՀՀ բնապահպանության նախարարության« ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության« երրորդ անձ «Արմենիա Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի՝ 08.02.2001 թվականին «Արմենիա Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ին տրված Թեղուտի հանքի շահագործման թիվ ՀՎ-ՄԾ-13/33 լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու« ՀՀ բնապահպանության նախարարի կողմից 03.04.2006 թվականին հաստատված շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական թիվ ԲՓ-31 դրական եզրակացությունը« ՀՀ բնապահպանության նախարարի կողմից 07.11.2006 թվականին հաստատված շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական թիվ ԲՓ-135 դրական եզրակացությունը« «Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու և հողամասեր տրամադրելու մասին» ՀՀ կառավարության 01.11.2007 թվականի թիվ 1278-Ն որոշումն առոչինչ ճանաչելու« 23.03.2004 թվականին «Արմենիա Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ին տրված Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի հանքարդյունահանման թիվ ՀՎ-Լ-14/90 հատուկ լիցենզիան« «Արմենիա Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի և ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ու ՀՀ բնապահպանության նախարարության միջև 09.10.2007 թվականին կնքված թիվ 316 «Հանքարդյունահանման նպատակով ընդերքօգտագործման լիցենզիայի պայմանագիրը»« 29.12.2005 թվականին «Արմենիա Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ին տրված ընդերքի օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության թիվ 21 հատուկ լիցենզիան« 04.05.2006 թվականին «Արմենիա Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի և ՀՀ բնապահպանության նախարարության միջև կնքված «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության» թիվ 140 լիցենզային պայմանագիրը« Թեղուտի հանքավայրի զարգացման ծրագրի աջակցման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 30.09.2005 թվականի նիստում ընդունված Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի հայեցակարգն անվավեր ճանաչելու« պատասխանողներին «Արմենիա Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ին Թեղուտի

հանքավայրի շահագործման ծրագրով նախատեսված գործունեության իրականացումն արգելել պարտավորեցնելու պահանջների մասին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը որոշել է վճռաբեկ բողոքը մերժել և ՀՀ վարչական դատարանի 24.03.2010թ. վճիռը թողնել օրինական ուժի մեջ:
ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/3275/05/09 գործով կայացված որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.
««Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ կազմակերպությունը իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում« դատարանում« պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:
ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան« եթե համարում է« որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով« գործողություններով կամ անգործությամբ՝
1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ« միջազգային պայմանագրերով« օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները« այդ թվում« եթե՝
ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար«
բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար« սակայն դրանք պետք է ապահովվեին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության« միջազգային պայմանագրի« օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով.
2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.
3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:
Վճռաբեկ դատարանի 30.10.2009 թվականի որոշմամբ Կազմակերպության և «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել և փոփոխվել է ՀՀ վարչական դատարանի 28.07.2009 թվականի որոշման՝ Կազմակերպության բողոքը մերժելու մասը՝ Կազմակերպության բողոքը բավարարվել է: Վճռաբեկ դատարանը վերոնշյալ որոշմամբ անհիմն է համարել Դատարանի կողմից «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառման հիմքով «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպության հայցադիմումի ընդունման մերժումը:
ՀՀ Սահմանադրական դատարանն իր 07.09.2010 թվականի ՍԴՈ-906 որոշմամբ քննության առարկա է դարձրել դիմողի դիրքորոշումն այն մասին« որ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը նախատեսում է դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների ավելի լայն շրջանակ« քան այն անձինք« որոնց իրավունքներն անմիջականորեն խախտվել են« հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ «խախտվել» բառից հետո «նրա» արտահայտությունը հակասում է ՀՀ Սահմանադրությանը:
ՀՀ Սահմանադրական դատարանը վերոնշյալ որոշմամբ արձանագրել է« որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ «խախտվել» բառից հետո «նրա» արտահայտությունը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:
Վերոնշյալից հետևում է« որ ՀՀ օրենսդրությունը հիմնված է այն տրամաբանության վրա« որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը« ի թիվս այլոց« ներառում է դատարան դիմելու իրավունքն այն անձանց կողմից« որոնց իրավունքներն անմիջականորեն խախտվել են:
Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը« որ ՀՀ օրենսդրությամբ դատարան դիմելու իրավունք նախատեսված է միայն այն անձանց համար« ում իրավունքներն անմիջականորեն խախտվել են վիճարկվող ակտով« գործողությամբ կամ անգործությամբ« հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է« որ վիճարկվող դատական ակտը հիմնավոր է և բխում է ՀՀ օրենսդրության կարգավորման նպատակներից»:

ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ կետի ուժով թիվ ՎԴ/3275/05/09 գործով կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) նույնանման փաստական հանգամանքներով սույն գործով պարտադիր են ՀՀ վարչական դատարանի համար, քանի որ դրանք չկիրառելու մատնանշման ենթակա ծանրակշիռ փաստարկներ առկա չեն:

Այսպիսով, հիմք ընդունելով ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված իմպերատիվ պահանջը՝ ՀՀ վարչական դատարանը հանգում է այն եզրակացության, որ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից հայցվող գործողության, այն է՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի ,,ժ,, և ,,ժգ,, ենթակետերով սահմանված փորձաքննության չկատարելու հետևանքով հայցվորների իրավունքներն անմիջականորեն խախտված լինելու փաստի բացակայության պայմաններում հայցը ենթակա է մերժման:

Նշվածն ինքնին բավարար համարելով հայցը մերժելու համար՝ դատարանը եզրակացրեց, որ դատավարության մասնակիցների ներկայացրած մյուս փաստարկները նշանակություն չունեն գործի լուծման համար, ուստի դրանց գնահատման անհրաժեշտությունը բացակայում է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով քննարկելով դատական ծախսերի բաշխման հարցը՝ դատարանը եզրակացրեց, որ պետական տուրքի փոխհատուցման խնդիր առկա չէ, քանի որ հայցը ենթակա է մերժման:
Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 112-115-րդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով, ՀՀ դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ կետով, դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Թռչնասերների կենտրոն» բնապահպանական ՀԿ և «Էկոդար» բնապահպանական ՀԿ հայցն ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության, երրորդ անձ՝ «Դելֆինարի Նեմո» ՍՊԸ՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի ,,ժ,, և ,,ժգ,, ենթակետերով սահմանված փորձաքննություն կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, մերժել:
Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել վերաքննության կարգով՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարան:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Ռ.ՀԱԿՈԲՅԱՆ